ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N 405 -Ա

« 17 » դեկտեմբերի 2024թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 378-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 26-ի «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, միացման պայմանագիրը, «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության և «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվեկշիռները, «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպեսս նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Եղեգնաձորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը և ընկերությունների կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, միացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 378-Ա որոշման 3-րդ կետի 3-րդ մասի «հոկտեմբերի 1-ի» բառերը փոխարինել «դեկտեմբերի 19-ի» բառերով.

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2024-12-17 18:04:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր